

կփնդուեն, ոտքի տակ ընկած էին, անցնող դարձողը կըկոխկուտէր կըլլկէին, ծեծէին, կսպանէին, ունեցած չունեցածսին ձեռքերէն կառնէին. ալ տանողը՝ տանողի էր, հարց ու փորձ անող չկար. կուղէ թէ մի կովի պողէն տաս մարդ բռնէր՝ դարձեալ պրծնելիք չկար:

Այսու ամենայնիւ կրակ ու բոց Հասանխանը սորանով ալ չբաւականացաւ, նա բանակէն մի ստուար գուռ գառած մեկնեցաւ անտի, շուտով ասպատակներ սփռուեցան. դաշտ ու դուրան բռնեցին ձեռք ընկած տնակալ թուրք ու հայ կողոպտեցին, գերի վարեցին Խնուսի, Վարդօյի, Բաքմանի, Քեղիի և այլ և այլ տեղեաց բնակիչները՝ Տուարածատափի վրայով անցան յերևան, գերեաց բիւր անէծքն ու աղաղակը իրենց հետ տանելով:

(Մարտ-նախիկ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Մարտ-նախիկ-3).

ԱԲ.

Քելիչեանի գեղը. նորա օրհեռու-նիւնը և խաչագողները. շինական դասաւարտ-նիւնը. Օրխաւեանի գեղը. նորա հնո-նիւնները. Բաղբեանի գեղը. նորա հնո-նիւնները և հանգստարանները: Պատմական յիշատակ-նիւն. ճանապարհը դէպի Սուրբ Աստուածածնի վանք. վանքի ծառասրահը. Եկեղեցին. արշաններ. գաւիթ. Եկեղեցու արշանագրո-նիւնները:

Իջայ կրկին Արփաչայի աղմկալից աիերը, այն տեղ, ուր գետը խառնուելով Ալագեազի կամ Աղթուլի գետի հետ՝ կազ-

մուսէ անկիւն: Անկիւնից դէպի հիւսիս, մինչև ժայռապատ լեռնաքօտինները տարածուում է հարթ դաշտավայր, երկարութեամբ մինչև 8 վերստ: Դաշտը, որ հիւսիսից դէպի գետը աստիճանաբար ցածանում է, ամբողջ երկարութեամբ կիսից ճեղքւում է լեռներից հոսող մի քաղցրիկ վտակով: Նոյն իսկ տարածութեան վերայ, վտակի ափերում, իրարից մօտաւոր հեռաւորութեամբ շինած են երեք գաղթական հայոց գիւղեր, Քեշիշքեանդ, Օրթաքեանդ և Բաշքեանդ: Երեքն ևս շրջապատուած են արտերով, պարտէզներով, ծառաստաններով և խաղողի այգիներով:

Սկսեմք ստորին գիւղից, Քեշիշքեանդից: Նա ունի 453 արական և 349 իգական բնակիչներ 96 գերդաստանով: Գոնէ այս երեք գիւղերի տնտեսական բարօրութիւնը ցոյց տալու համար յիշեմ, որ Քեշիշքեանդի բնակիչները պարապում են հողագործութեամբ և այգեգործութեամբ: Այգիները թուով 90 են 78 գեսեստին տարածութեան վերայ սիւռուած: Զրի սակաւութիւնը նշանաւոր արգելք է լինում այգիների շատանալուն: Խաղողի մեծ մասից քամուսն գինի, իսկ փոքր մասը, մօտ 500 պուդ, առանց քամելու, կշռով ծախուսն կամ փոխում են ցորենի հետ:

Այգիների կարգում ունին անպտուղ և պտղատու ծառեր: Առաջինից բարդի 500 ծառ, Ղարաղաճ—1500 ծառ, ուռի 500 ծառ, որ գործադրվում են շինութեանց համար: Մրգատու ծառերն են՝ փշատ 300 հատ, թթենի 1000 հատ և ծիրան 2000 հատ. վերջիններից ստացւում է տարեկան մինչև 2000 պուդ թարմ ծիրան որ չորացնում են (չիր) կերակուրի մէջ ուտելու: Ոչխարի թիւը հասնում է մինչև 2300 գլխի, խոշոր տաւար 500 գլուխ, ձի 60 հատ, էջ 60 հատ, ջորի ոչ մի հատ, մեղու 50 փեթակ: Գիւղատնտեսական կարիքը լրացնելու համար ունին գութան 5 հատ, արօր (վեցկի) 75 հատ, ջառջառ 70 հատ, ոսյլ 40 հատ:

Արհեստի կողմից՝ Քեշիշքեանդը ունի երկու գրագէտ քահանայ, 32 գրագէտ աշխարհիկ մարդ, 60 հատ ոստայնանկ (ջուլհակ), մի դարբին, երկու ներկարար, մի ճոթածախ, երկու

երգիչ (աշուղ), երկու զուռնաչի, հինգ հատ հիւսն, վեց հատ բուրդ գզօղ, վեց հատ թալիք շինող: Եթէ Խալաֆոյն-Նիւնը դասինք արհեստների կարգում, Քեշիշքեանդը վստահօրէն կարող է մրցել միւս գիւղերի հետ: Խաչագողութեան զնացել են (շատերը միջանի անգամ) և Տ ւարից յետոյ վերադարձել են տուն 21 մարդ: Երկու տարից յետոյ՝ երեք մարդ: Երեք տարից յետոյ՝ 15 մարդ: Կարգ տարից յետոյ՝ չորս մարդ: Եօթ տարից յետոյ՝ չորս մարդ: Դեռ ևս (մինչև 1879 թ.) չեն վերադարձել — Տ մարդ՝ երկու տարի: Տե՛ր՝ 4 տարի: Երկուսը 5 տարի: Երեքը 8 տարի: Երկուսը 10 տարի: Երկուսը՝ 12 տարի: Երկուսը 16 տարի: Տե՛ր՝ 18 տարի: Տե՛ր՝ 20 տարի և Տե՛ր՝ 35 տարի: Օտարութեան մէջ մեռել են 8 մարդ:

Քեշիշքեանդն իբրև Դարալագեազի առաւել կէդրոնական տեղ, հէնց սկզբից միշտ եղած է երկրի պօլիցիական կառավարիչների օթեան: Այդ տեղ նստումէին հին դիւանէֆէֆէրը (մովրուխերը) մինչև սորանց պաշտօնի վերջանալը 1868 թուին: Սորանից յետոյ մի առ ժամանակ մնում էր այդ տեղ Դարալագեազի մասի դատական քննիչը: Այդ է պատճառն որ այսօր էլ գիւղի մէջ կանգնած է մի հասարակաց հնոտի տուն, երկու երեք սենեակով, ուր բնակուում էին նախկին կառավարիչներն և այժմ գիշերում են ծառայող աստիճանաւորները շրջագայութեանց ժամանակ: Այդ չոր, ճեղքճղքուած պատերն, իբրև ականատես, կարող են պատմել շատ բաներ հին մովրուխերի սանձարձակ կառավարութեան մասին:

Այժմ այդ շինութեան մէջ, կիւրակէ օրեր, Քեշիշքեանդի և շրջակայ գիւղօրէից շինական դատաւորները վարում են իւրեանց պաշտօնն անողոք և անբողոք վճիռներ կայացնելով գիւղացիների վերաբերութեամբ: Համարեա ոչ մի գործ, ոչ մի գանգատ ոչ մի վէճ անաչառ կերպով չէ վերջանում շինական դատարաններում: Այդ է պատճառն որ մի կողմից շինական դատարանը կորցրել է ժողովրդի աչքում իւր նշանակութիւնը, ժողովրդականութիւնը և յարգանքը, միւս կողմից՝ իւրաքանչիւր ազգեցիկ գիւղացի, ընտրութեանց ժամանակ ճգնումէ, տքնումէ գործէ դնում օրինաւոր և ապօրինի միջոցներ շինա-

կան տանուտէր կամ դատաւոր ընտրուելու, երեք տարի յի՛ ծառայութեան համար:

Հարեանցի գաղափար կազմելու համար այս շինական դատաւարութեան վերայ՝ ես կ'աւտմեմ մի գործ, որի վճռին անձամբ ներկայ եղայ Քեշիշքեանդում: Երեք դատաւորներն և նորանց գրագիրն ոտերը կախած՝ նստած էին կարճ նստարանի վերայ, համարեա միմեանց կ'պած: Նոցանից մինը արխալուզով, դատաւորական նշանը կրծքին կախած, միւս երկուսը չուխայով և վերջիններից մինը առանց նշանի և միւսի նշանը դրած սեղանի վերայ, առաջն, Գրագրի առաջ՝ մերկ սեղանի վերայ դրած են գրիչ, թանաքաման և մի հասարակ տետրակ, փոխանակ ժապաւինեալ մատեանի վճիռներն արձանագրելու: Իմ ներկայութիւնը ըստ երևոյթին, յարգանք էր ազդում և դատաւորները աշխատում էին կարելոյն չափ կարգ և օրինակաց նութիւն պահպանել:

Տանուտէրի օգնականը՝ ճիպտը ձեռքում կանգնած է նստարանի ծայրում: Անենակի մէջ կանգնած են մի քանի գիւղացիներ, հողոտ, փռոտ, ըստորում կալ կանելու ժամանակ էր: Մի ծերունի, մի աչքով կոյր, պատի տակ սեղմուած, կողքով գէպի դատաւորները, ստէպ ստէպ ձեռքերն և աչքերը բարձրացնում է գէպի երկինք և արտասանում է «Տէր Աստուծո՛ւ հախի՛ն ու նհախի՛ն որո՛րաստասան անէն»: Գանգատաւոր երիտասարդը հին չուխայի թեւը պատռած՝ ակնածութեամբ նայում է դատաւորների վերայ: Վերջապէս գրագիրն առաւ գրիչն, աչքը ձգեց գանգատաւորի վերայ և հարցրեց, ի՞նչ է գանգատդ, ասա՛:

— Դիվանագիրները և օգնականները սաղ լինին, մի քայլ առաջ գալով և գլուխ խոնարհեցնելով ասաց չուխայի թեւը պոկած երիտասարդն, — ես իմ տանա բազի պատը կարկատում էի և յանկարծ իմ դրկից Ալօի տղայ Կալօն դուրս եկաւ և դազիանակով զարկեց երեսիս: Այս առելով՝ երիտասարդն իսկոյն ցոյց տուեց երեսի արիւնոտ ձեղքուածը:

Կալօն 18 տարեկան աշխոյժ պատանի էր, կտրեց գանգատաւորի խօսքը և քարձր ձայնով հաստատում էր որ ոչ թէ ինքն

է ծեծել գանգատաւորին, այլ նա է քաշքշել սորա մազերն և փայտով մէջքը կապտեցրել: Արխալուզով դատաւորը սորան հրամայում է լռել: Կալօն և նորա եղբայրը կրկին բարձրացնում են ձայներն և գանգատաւորի հետ լեզուով և ձեռքերի ուժգին շարժմամբ վիճելով ուշ չեն դարձնում իրար կպած երեք դատաւորների վերայ: Արխալուզով դատաւորը նորից հրամայում է լռել կամ սորան կամ նորան, ռակայն լսող չկայ, աղմուկն ընդհանուր է: Իմ լուռ ներկայութիւնս այլ ևս չէ ազդում, Պատին կպած ծերունին, առաստաղին նայելով, կրկնում է իւր խօսքերը: Վերջապէս գրագրի միջամուտութիւնը փոքր ինչ հանդարտեցրեց աղմուկը: — Այդ միջոցին դուրս եկաւ տանից Կալօի եղբայր Յարօն շարունակեց գանգատաւորն, և վրայ հասնելով մազերս քաշքշեց, իսկ ալեւորը — պատին կպած ծերունու վերայ նայելով — ինձ հայհոյում էր և իւր որդւոց, Կալօին և Յարօին, սովորեցնում էր ծեծել ինձ...: — Դու չէիր որ ինձ վերայ քար գցելով հայհոյում էիր թէ ինչի ձեր պատի տակից եմ անցնում, խօսքը կտրեց մեծ եղբայրը, Յարօն: — Բա, համ ինքը ծեծումէ, համ գալիս է գանգատ անում... նորից խառնուեց կալօն:

Էս ի՞նչ օրենք է, ի՞նչ գատաստան է, որ ամէն ժամանակ գուռս կկտրէք...:

— Տօ, ո՞վ է կտրում գուռդ, մե՞նք քոնը, թէ դու մերը, կտրեց Հարօն գանգատաւորի խօսքը և սպառնալիքով մօտեցաւ նորան:

— Միտդ է որ կալում բռնեցիր և ծեծեցիր ինձ. մէջ խառնուեց Կալօն: Աղմուկը նորից բարձրացաւ: Ծերունին շարունակում էր իւր փնթփնթոցը «Տէր Աստուծո՞ւ դու հախն ու նկախին դաստիարակ անէս»: Արխալուզով դատաւորը «տօ, սոքա կացէք, տօ, կարգով խօսէք. դալմազալ մի անէք, տօ, կուռի տեղ չէ, ազդու և համողիչ խօսքերով կարողացաւ նորից հանդարտեցնել:

— Դանգատդ շարունակիր, ասաց գրագիրը:

Կալօն վրայ հասաւ, չուխիս թւեր պատուեց...:

— Զուխէդ ի՞նչ արժէ, հարցրեց աչքը կպած գատաւորը:

որ մինչև այժմ չուռ էր:

— Զուլիցս ինչ է մնացել որ . . . դիմի պատուով է:

— Ելի, ինչքան արժէ, հարցրեց նոյն դատաւորը:

Գանգատաւորը ամէն կողմից զննեց իւր չուլին, կարծես նորան նոր էր տեսնում իւր կեանքում և փոքր տատանուելուց յետոյ պատասխանեց

— Երէ՛ր ուրի՛շ

Այս խօսքերից յետոյ կարելի էր արդէն հասկանալ գործի ելքը. արդէն երևում էր, որ վճիռը պէտք է կայանար յօգուտ չուլսայի և հետևաբար քննութեան շարունակելը լոկ ծիսի համար էր:

— Շարունակիր խօսքդ ասաց գրագիրը:

— Տեսայ որ օհտիներից չեմ կարողանում գալ, շարունակեց գանգատաւորը, ասացի, ջանմ դիվանբագիներ ունինք, մալիք ունինք (շինական տանուտէրի օգնական), մեծ ունենք, էսպէս բան չի լինիլ, գնամ, ասացի, գեղի մալիքին, որ եկաւ ամէն բան տեսաւ:

Հա ինքն էստեղ է, ինքն իրան Աստուած, թող ասի, ցոյց տուեց տանուտէրի ճիպոտաւոր օգնականին:

— Ի՞նչ էլ վկայ ունե՞ս, հարցրեց Կալօին աչքը կապած դատաւորը:

— Իմ վկան իմ կապտած ջանն է. պատասխանեց Կալօն:

— Տօ, մալիք Գէորգ, մին տես դրա ծեծուած տեղերը, ասեց նոյն դատաւորը:

Տանուտէրի օգնական Գէորգը Կալօի թիկունքը շրջեց դատաւորների կողմն և փեշերը բարձրացնելով մերկացրեց նորան. և երբ ոչինչ նշան չգտաւ, յայտնեց ատենին իւր բժշկական դիտողութեան բացասական հետևանքը: «Տէր Աստուած, դու հախն ու նհասին դատաստան անես», կրկին լսուեց պատի տակից: Առաջարկեցին մալիք Գէորգին պատմել իւր տեսածը: Նա ցածր հտղաց, ձայնը մաքրեց, ճիպոտը աջ ձեռքից տարաւ ձախն և սկսեց:

— Ես տանը նստած էի որ մին էլ նա եկաւ, ցոյց տալով գանգատաւորին, թէ հաւար արի, ինձի սպանեցին. գնացի տեսայ

որ զալմազալ են անուամ նորա դռանը հալօն, Յարոն և նրանց հերբ: Ասացի սուս կացէք, շան որդիք, քաշուեցէք ձեր տները, ինչէք զալմազալ անուամ: Տեսայ որ չեն լուամ, մի քանի ճիպոտ, մի քանի սիլլայ զարկի հալօին ու Յարօին, բայց նրանք հէնց աշխատում էին ընկնել նորա վերայ (գանգատաւորի):

Սորանով վերջացաւ քննութիւնը, իմացուեց անմեղն և մեղաւորը: Գորա համար էլ դատաւորներն ասացին վիճողներին «դէհ, քաշուեցէք, կորէք, ուադ իլէք, բարիշեցէք, ամօթ է»: Մալիք Գէորգը ճիպոտով սորա և նորա փեշերին կամաց զարկելով ուղարկեց հաշտութեան սենեակը: Կալօի ծերունի հայրը վերջինը դուրս գալով շեմում վերջին անգամ արտասանեց իւր սովորական պարբերութիւնը և յետեւից դուռը ծածկուէց:

Դատաւորներն անլսելի ձայնով իրար հետ և գրագրի հետ խորհրդակցեցին: Գրագիրը թերթեց շինական դատարանի օրինագրքայիլը և ցոյց տալով դատաւորներին մի յօդուած՝ ապահովացրեց նորանց, իսկ ինքը սկսեց գրել դատաւիճիւր: Ես որ այդ բոլորը գիտումէի, եզրափակեցի որ դատաւորների համոզմամբ հաշտութիւնը տեղի չպէտքէ ունենայ և թէ գանգատաւորների դատի արդարութիւնը ասպցուցած է: Հաշտութեան սենեակում այդ ժամանակ սաստիկ աղմուկ, հայհոյանք և սպառնալեաց ձայներ էին լսվում: Մինչև անգամ յառաջ եկան շատ հին հաշիւներ, հետեւաբար և յարձակումն միմեանց վերայ: Տանուտէրի օգնական Գէորգը ճիպոտի թեթեւ զարկով նորից ներս քշեց վիճողներին դատաւորների ատեանը:

— Հը, չբարշաք, ձեւի համար հարցրեց ալիսալուզով դատաւորը:

— Որ չի բարիշում, ես ի՞նչ անեմ, ցոյց տալով գանգատաւորի վերայ՝ պատասխանեց Կալօն:

Դատաւորները լուռ հայացքով միմեանց հետ և գրագրի հետ խօսեցին, ապա չորսն ևս (դատաւորները և գրագիրը) յանկարծ ոտքի վերայ սւղիղ կանգնեցին և գրագիրը մի թղթի վերայ կանխիկ գրած վճռի միայն եզրակացութիւնը կարգաց որով Կալօն ենթարկուում էր ելէ՛ս ուրբէ՛ի տուգանքի և ելէ՛ս օր կալանաւորութեան:

Յայտնի է, որ շինական դատարանի կանոնադրութիւնը ոչ մի ձեւականութիւն չէ որոշում դատաւարութեան համար, ամենայն վճիռ պէտք է կատարուի տեղական սովորութեան համաձայն, Ուրեմն դատաւորների ոտքի կանգնելը վճիռ կարգալու ժամանակ մի նորութիւն էր, որ առաջի անգամն էր պատահում և, կարծեմ, յառաջ եկաւ իմ ներկայութիւնից: Գուցէ հենց այս էր պատճառը, որ դատաւորները լուրջ էին պահում իւրեանց, հայհոյական բառեր քիչ էին արտասանում: Սակայն այնուամենայնիւ չկարողացան թագցնել իւրեանց թոյլ կողմերն, զօր օրինակ ի՞նչի գրագիրը խառնուումէր քննութեան մէջ. ի՞նչով հաստատուեց Կալօի մեղաւորութիւնը. ի՞նչի վճիռը գրուեցաւ հասարակ թղթի վերայ և ոչ ժապաւինեալ մատենում և այլն:

Շինական դատարաններում իրօք պատահում են շատ վայր ի վերոյ բաներ, շատ չարիքներ: Դատաւորների տգիտութեան հետ երևում են գրագրների իշխանութիւն և կամայականութիւն, մի անգամ կայացած վճուի մի քանի անգամ փոփոխութիւն, պօլիցիական իշխանութեան կողմից վերահսկողութեան կատարեալ բացակայութիւն, տուգանքների գումարաց վատնումն տանսւտէրի և դատաւորների մէջ և այլն և այլն: Այս է պատճառն, որ ժողովուրդը, որի համար կազմակերպուած է շինական դատարանը, հաւատ չունի նորա վերայ, ատում է նորան և կցանկար օր առաջ ջնջուած տեսնել նորան:

Քեշիշքեանդը, չնայելով որ կանգնած է հայ աւերակների վերայ բայց հնութեանց կողմից առանձին բան չի ներկայացնում, բացի մի հին հասարակ քարաշէն եկեղեցուց, որ նորոգած է այժմ, և բացի մի աւերակ դարձած բերդանման շինութեան հագիւ նշմարելի մնացորդներից մի սուր Բլրակի գագաթում, ուր կան և անարձանագիր տապանաքարեր: Բլրակը գիւղի հարակային եզրումն է և նայում է դէպի Արիաչայ: Վերջացնելով այս գիւղի հետ իմ հաշիւներս՝ ես գնում եմ հետևեալ մօտակայ գիւղը, Օրթաքեանդ:

Երեք—չորս վերստ հեռու դէպի հիւսիս արևելք սիւռուած է Օրթաքեանդ հայաբնակ գիւղը, որ լինելով երկու գիւղերի

մէջ՝ ընդունել է Օքլիս անունը: Նա ունի 221 արական և 189 իգական և 48 գերդաստանով բնակիչներ, գաղթած Պարսկաստանից, որի կենցաղը նոյնն է ինչ որ միւս գիւղերում: Երջապատուած է ինչպէս նախընթաց գիւղը արտօրայքով, ծառատաններով և այգեստաններով:

Օրթաքեանդն ունի իւր շրջակայքում հին հանգստարաններ իւրեանց մահարձաններով: Մի հանգստարան հիւսիսային կողմումն է, միւսերը—արեւմտեան: Վերջին կողմում կան փոքրիկ բերդի մնացորդք իւրեանց բուրգերով, երեք յորս շինութեանց աւերակներով և մի հատ կանգուն խաչքարով 24 (760) հայկական թուականից: Բերգատեղի անուն է Վարդանի Բէրդ: Ո՞վ է Վարդանն, որ ժամանակից է բերդը, ինչպիսի բերդ է եղել դա այդ հարթ տեղում, ես այդ չգիտեմ:

Սորանից արեւմուտք, բլրակի վերայ կայ մի խումբ արձանաքարեր, որոնցից մինը գեղեցիկ մեծ, բարձր և կանգուն, ունի այս արձանագրութիւնը «Այս խաչս Քրիստոսի արեամբ մրկած է (թերև ներկած կամ մկրտած) թ. 2. (700): Հայ կանանց համար սա ուխտատեղի է, աղատումէ ջերմից (տէնդից) և այդ պատճառով ունի իւր պատուանդանի վերայ մի քանի կաւէ ճրագներ: Սորա մօտ, միւս գերեզմանատան մի քարի վերա, «ի թ. 225 (787) այսէ հանգիս Գրիգորի»: Միւսի վերայ «թ. 270 (999)»:

Օրթաքեանդից ճանապարհը առուակի ամիով աստիճանաբար բարձրանում է դարի վեր, 4—5 վերստ Բաշքեանդ գիւղը, որ ընդունել է, Բաշ անունը առաջին երկու գիւղերից բարձր լինելու համար: Իւր յարմարագոյն գիրքով գեղեցիկ գիւղերից մին է: Առուակի երկու ամիերը և գիւղի երեք կողմը սիւռուած են այգիներ և ծառատաններ: Վերջիններին մէջ նշանաւոր մասն են կազմում հինաւուրց շարեշար ընկուղենիք, որոնք ձորի միջով գէպի հիւսիսային լեռները շարունակուում են մինչև սուրբ Աստուածածնի վանքն, ուր պէտքէ գնանք և մենք:

Երևում է որ Բաշքեանդի տեղը եղած է երբէմն լայնարձակ բնակութիւն, ըստ որում գիւղի շուրջը կան սիւռուած մինչև ութ հանգստարան իւրեանց անարձանագիր կամ եղծուած ար-

ձանագրութեամբ տապանաքարեր: Գիւղի տեղը եղած են նաև բազմաթիւ շինութեանց փլատակներ, որոնց քանդել հարթել են այժմեան գիւղացիք Պարսկաստանից գաղթելուց յետոյ և նորանց վերայ շինել են այժմեան կանաչագետլ այգիներն և ծառատանները: Հողի տակ գտել և աւերել են մի գեղեցկութիւն տան աւերակ մեծամեծ սրբատաշ քարերից, որոնց թւում ելել են առիւծի և վագրի պատկերներ: Գիւղացիկ կոտորել են դարանց և տապանաքարի վերածել: Կարծում են որ իշխանաւորի կացարան է ելած նա: Այս և միւս շինութեանց յարմար քարերը գործադրուած են ներկայ շինութեանց վերայ:

Գիւղի մէջ ծխական եկեղեցին հասարակ քարից, սագաշէն կամարակապ շինութիւն է հնուց մնացած չորս հաստապատ սիւների վերայ: Ունի երկու դռու, արևմտեան այժմ գործածելի և հարաւային՝ բոլորովին պատու ծածկած: Չունի սեփական արձանագրութիւն, որ ցոյց տար շինութեան թուականը կամ եկեղեցու նախկին անունը: Բայց պատերի մէջ բերած հագուցած քարերի և խաչքարերի վերայ երևում են գրութիւններ և փորագիր պատկերներ:

Արևմտեան դռնից դէպի հարաւ, պատի մէջ կիսաբոլորակ քանդակագործ քարի վերայ խաչաձև նշանի մօտ գրած է «Յիսուս Քրիստոս Տէր Աստուած», որի տակ գեղեցկափոր տառերով շարունակած է «ողորմի Սարգաթան է քահանային»: Հիւսիսային կողմի արձանի խաչի թւերի անկիւններում փակ ձևով գրած է «թ. 212 (726) Սբ. (տուրք Յբ. (Յակոբ) Մխ. (Խիթար) Վր. (Վարդապետ)», երևի այս արձանագրութիւնից է առած որ եկեղեցու այժմեան անունը «Սբ. Յակոբ է»:

Բաշքեանդի հին հանգստարաններից մինում այժմ ևս շարունակում են թաղել հանգուցեալներին: Սորա մէջ մի տապանաքարի վերայ գրած է չափաբերական—բանաստեղծական ոտանաւոր, որի մասին հաստատում են թէ նոյն գիւղի այժմ հանգուցեալ Տէր Աւագ արքայամեանի հեղինակութիւնն է: Տեղական բանաստեղծական և գրական պատրաստութիւնը ցոյց տալու նպատակով զնում եմ այս տեղ տապանագրի պատճէնը:

- « Խաղողացեալ սոյն տապանի,
- « Սաէր որդի մեր իշխանի.
- « Ճարտար վարուք քաջ տապանի,
- « Իսկ ինքն Սարգիս անուանի,
- « Ի ժամանակս պատերազմաց Անգղիայի
- « Եւ ռուսաց սա կայսրի ծառայելով
- « Ցաւն նել յոյժ պնդի.
- « Ուլ եկեալ եհաս յիւր օթեան,
- « Հանգել եղաւ ի յայտ տապան,
- « 1855 ամեան.
- « 19 Սեպտեմբերի ամեան:

Ի վերջոյ աւելացնեմ որ Բաշքեանդ գիւղի բնակիչների թիւն է արական 169 հոգի և իգական 142, իսկ գերդաստան 38 հատ՝ քուրն ևս Պարսկաստանի գաղթական: Նոցա պարսպմունքը նոյնն է, ինչ որ նախընթաց երկու գիւղերում:

Վերայիշեալ երեք հարեան գիւղերի թրքական անուները վերջին ժամանակի ծագում ունին: Նորանց տեղ եղած հին գիւղերի անուներն այժմ՝ մեզ անյայտ են: Իիմելով Օրբելեանի պատմութեան, մենք տեղեկանում ենք, որ նոյն Օրբելեանը իւր ժամանակի արձանագրութիւններից և աւանդութիւններից իմացել է որ վարդանանց զօրքի մնացորդաց մի մասն ոչընչացել է Պարսից հալածող զօրաբաժնից «ի գաւառամէջն Վայոց Ձորոյ մերձ ի բլուրն, որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան՝ ի գետամիջին Եղեգեաց և Մողանի»: Գիւտ կաթուղիկոսի հրամանով՝ Շահիրէտ, Արզիու, Ջրև և Արշէն երէցը շինեցին այդ նահատակաց ոսկերոտեաց վերայ մի կաթուղիկէ եկեղեցի, որին ի ժառանգութիւն գրուեցաւ բոլոր վայրը, մեծ գետից (Արիաջայից) սկսած դէպի լեռնակողմն, որ Արշէն էր կոչուում: Բայց այժմ (Օրբելեանի օրով) յետ աւերման տեղւոյն եզև շինանիստ գեղջկաց և կոչեցաւ տեղին Խոսրուիւղ*):

Ոչինչ կասկած կարող չէ լինել որ Օրբելեանի յիշած վայրը

(*) Օրբ. պատմ. հ. ա. գլ. ԺԹ.

Նղեգեաց և Մօղանի գետերի մէջ կազմում է այժմեան Քեշիշ-քեանդի, Օրթաքեանդի և Բաշքեանդի գիւղապատկան հողերն: Աւրեմն հինգերորդ դարում այդ վայրում չէ լինում գիւղ և բոլոր վայրը, որ այժմ պատկանում է պետական գանձարանին, տուած էր ժառանգութիւն նահատակաց եկեղեցուն: Օրբելեանի օրով վայրը ստացել է Խապորայէլ անունը:

Պատմութեան խօսքերից երևում է ուրեմն, որ այդ սահմանում եղած են երկու տեղ կամ գիւղ, մինը Արկիօն, միւսը Խապորայէլ: Առաջին անունն ոչ միայն Օրբելեանից շատ առաջ, այլ և նորանից յետոյ կար իբրև Արկիօնի: Ղօշալանքի (Յախացքարի սուրբ Աստուածածնի եկեղեցու պարսպի դրան վերայի 766 կամ 1317 թուականից մնացած արձանագրութեան մէջ այժմ կարելի է կարգալ, որ Պռոշ իշխանի թոռ Էսչին նուիրւէ է նոյն եկեղեցուն իւր հայրենեաց ձիւնատունկ այգին է Արկիօն: Միւս գիւղը—Խոտորալէզ, յիշուում է Սպիտակաւոր սուրբ Աստուածածնի վանքի երկու արձանագրութեանց մէջ, որոնց պատճէնը նոյն վանքի նկարագրութեան մէջ կրնեմ: Սակայն նկատողութեան արժանի է, որ նոյն անունն Օրբելեանի պատմութեան մէջ գրուած է Խապորայէլ, իսկ յիշեալ արձանագրութիւններից մինի մէջ Խապորայէլ, և միւսի մէջ—Միապորայէլ: Դժուարին է վճռել թէ որն է նոցանից ուղիղն:

Բաշքեանդի և Օրթաքեանդի հնութեանց մնացորդաց նայելով պէտք է ենթարկել, որ Արկիօնք և Խոտորալէզ այդ երկու տեղերում պէտք է լինէին, առանց սրոշելու նորանց իւրաքանչիւրի տեղն: Այժմ այդ երկու անուններն ևս բոլորովին անյայտ են Բարալագեազի բնակչաց: Թէպէտ երեք գիւղերի բնակիչներից ոմանք գրագէտ կամ բանասէր անձինք յիշում են այդ անուններն, մինչև անգամ ցոյց են տալի տեղերը, սակայն նոքա անումեն առաւել հնասէր անձանց խօսքերից: Նոքա Քեշիշքեանդին յատկացնում են Փոնյալալ անուն, որ յիշուում է Թանահատի վանքի (Ղարալանք) մի արձանագրութեան մէջ: Երեք գիւղերի յիշեալ հնագոյն անուններից և ոչ մինը չէ յիշուում Օրբելեանի գիւղօրէից ցուցակի մէջ:

Այսքանս հերիք համարելով երկու գետամիջի վայրի որոշման

մասին, ես ուղղվում եմ ժայռերի միջոցով դէպի Սպիտակու-
 ւոր Աստուածածնի վանքը: Բաշքեանդը դրած է բարձրաբերձ
 ժայռերի և լեռների մի ձորի բերանում, որի միջով հոսում է
 երեք գիւղերի կարկաչուն առուակը: Հենց այդ առուակի ամե-
 րով աստիճանաբար բարձրանում եմ դէպի հիւսիս՝ մերկաճակատ
 ժայռերի մէջ: Ճանապարհս զարգարուած է խիտ առ խիտ հի-
 նաւուրց ընկուզենեաց շարքերով, որոնք իբրև հասարակաց
 սեփականութիւն, գտնուում են ընդհանուր գիւղի հոգացո-
 ցութեան և հսկողութեան տակ: Հետեւաբար՝ նորանց բերքը
 գիւղական համայնքի ձեռքով ժողովուրդում է և իրեանց մէջ
 բաժանուում: Ընկուզենեաց հրաշալի ստուերի տակ, տերե-
 ների խիտ բուրումն առնելով, ես ահա ընթանում եմ իմ
 ուղեկիցների հետ նոյն գիւղի բնակիչներից:

Գիւղից կէս վերստ հեռու, ճանապարհի եզրում, տեսնում
 ենք ձիթահանքի աւերակ իւր վիթխարի բալտրակ քարով: Փոքր
 ինչ այն կողմը՝ աների և եկեղեցու աւերակներ: Ահա մօտե-
 ցանք սոսկալի ժայռերին: Մեր ձիանքը շնչասպառ բարձրանում
 են իրար յետեւից նեղ, կեռ և ծուռ քարոտ կողարով: Մեր
 գլխի վերը կախուած են քարերի վիթխարի բեկորներ: Եւ
 գնում ենք և սոսկում ենք ձիանց սայթաքելուց իւրաքանչիւր
 քայլափոխում: Այդ սրտատրոսի միջոցին մեր ուղեկից, Բաշ-
 քեանդցի Տանուաէր Մուրադը, խոշոր դէմքով, ուռուցիկ աչ-
 քերով, հաստաստուար ընչացքներով մի յաղթանգամ մարդ,
 իւր առնացի ախորժելի ձայնով սկսեց երգել Հայաստանի վերայ
 յօրինած Սէյադի երգերից մինը: Ձայնի արձագանքը հազար մի
 տեղերից անդրադառնում էին ժայռերի և լեռների կրճքերից:
 Տպաւորութիւնն առանձին էր՝ երբ երգի մտքին համաձայն
 նայում էիր այդ պատմական հազար տեսակ փորձանք կրած
 ձորերի և լեռների վերայ:

Ահա մեր գլխի վերը, խիտ թէք ժայռի լանջում երևում է
 հնուց պատած, մասամբ քանդուած, ծուռ ու մուռ ճանա-
 պարհ, որ տանում է գագաթի վերայ հիմնած պարսպապատ
 ապաստանարանի մէջ: Ահա և մի անարձանագիր խաչքար, կի-
 սով չափ հողի մէջ թաղուած: Երկու ձորի վճիտ առուակներն

այդ տեղ միանում են և որընթաց հոսում են դէպի Բաշքեանդ։ Այդ տեղ կանգնած են բազմաթիւ ընկուզենիք։ Եղել է այգի, կայ և խաղողի որթ։ Ահա մեր առաջ, երկու յիշեալ առուակներին մէջ մի վիթխարի կոնաձև լեռնաբլուր, իւր գագաթի վերայ բերդի աւերակներով։ Բայց մենք թեքուենք ձախ, դէպի արևմուտ։

Չորի գլխին, Ժայռի հարաւային լանջում մեր առաջ դուրս եկաւ սահմանափակ տափարակի վերայ կանգնած Աստուածածնի վանքը, որ իբրև պճնազարդ պսակ՝ բազմած է նշեհեաց, ընկուզեհեաց, տանձեհեաց, խնձորենեաց և վարդեհեաց մէջ։ Վարդերից գուցէ ծագել է վանքի թրքահնչիւն Գլխան, կոչումը։ Տեսէք ինչպէս կաքաւների երամը կղկղիկ երգերով, առանց ուշ դարձնելու մեր վերայ՝ անցնում են ծառերից քարակոյտներին և սոցանից Ժայռերին։ Նրում է որ այդ ծառերը վանքապատկան այգիներ են եղած, իսկ այժմ ամայի։

Վանքը շրջապատած է արևելեան, հարաւային և արևմտեան կողմերից միաշար քարէ սենեակներով՝ մինչև 30 հատ, ոմանք կամարակապ և դեռ կանգուն, մնացեալները հասարակ տանիքով արդէն խոնարհուած է։ Իսկ հիւսիսային կողմը փակուած է հասարակ քարից բարձր պարսպով։ Արևմտեան սահմանում աղբիւրը բղիտում է գեղեցիկ ուռենեաց ստուերի տակ։

Եկեղեցին ունի իւր արևմտեան պատին կղած արդէն խոնարհուած գաւիթ։ Եկեղեցին փոքր է և գմբեթաւոր, ամբողջովին շէկ սրբատաշ քարից։ Կաթուղիկէն իւր սրածայր գագաթի վերայ ունի դեռ ևս խաչի պտուղանդանի սև քարէ գունդը առանց խաչի։ Ուղեկիցներս նկատեցին ոմն թուրք համարձակուել է հրացանով զարկել այդ գնդակին և երկու աչքով իսկոյն կուրացել է։ Եկեղեցու կամարների սալաքարերն ընկած են, բայց առաստաղը դեռ ոչ մի տեղ չէ ծակուել։

Ձնենք եկեղեցու պատերն արտաքին կողմից։ Նայեցէք հիւսիսային պատի վերայ։ Ահա բարձր ճակատում մի ամբողջ քարի վերայ պատկեր։ Նստած է մի ծերունի, աջ ձեռքում աղեղն, իսկ ձախ ձեռքը դրած իւր ծնկան վերայ։ Նորա հանդերձը լայն և երկայն է։ Գլխարկի եղրները յետ ծալած դէպի վեր և ոչ

Թէ «Թագ սկանսկոու» ինչպէս առումէ Ջալալեանի գիրքը (հ. Բ. երես 148). նորա ձախ կողմում խոնարհ կանգնած է մի երիտասարդ: Ափսոս որ յայտնի չէ սոցա ով լինելը: Սոյն հիւսիսային պատից ընկած են քարեր, և այդ տեղ չէ երևում Ջալալեանի գրքի մէջ յիշուած զրահաւորուած ձիաւորը: Գուցէ նա ընկած է այլ տեղ: Տեսնենք: Արեւելեան պատի վերայ, նորա երկարութեամբ շարուած են խաչեր Թէք գիրքով:

Անցնենք հարաւային կողմը: Ահա ձեր ոտքի տակ կէս արշի-նաչափ քարի վերայ ծաղկահալու շրջապատ նկարի մէջ երկու ձեռք բռնելեն մի մի խաչ: Տակը գրած է «Թվ. 229 (783): Ուղեկիցներս պատմում էին, որ յիսնական թուականներում Գարալագեղի պօլիյիական կառավարիչ (մուրով) Աէմիօնովը տարել է իւր մօտ այս խաչքարը, և դեռ Քեշիշքեանդ, իւր կեցութեան տեղը չհասած՝ իսկոյն խելագարուել է: Խաչը վերագործնելուց յետոյ խելագարութիւնը նորից թողել է թե-րահաւատին: Ուղեկիցներիս խօսքերից երևում էր, որ Սպիտակաւոր ոտքը Աստուածածինը չէր սիրում անպատիժ թողնել իւր գէմ մեղանշողներին, լինին նոքա ուսու մուրով, Թէ թուրք, ռամիկ, բոլորը մին է:

Սոյն հարաւային պատի տակ ընկած են և երկու արձան սպիտակ սալաքարերի վերայ նկարած: Մինը ներկայացնում է ուժեղ երիտասարդ արագաքայլ ձիու վերայ, Ձին սրընթաց արշաւում է յառաջ: Իսկ հեծեալը դէմքը շրջած յետև, լայնալիճ աղեղն ամրացրած ձախ թևի վերայ, նպատակ է ընտրել աչքի առաջ: Նա թէ և նետն արձակակել է, բայց աղեղի լարը դեռ խիստ ձգուած է: Արձանի վերին մասում երևում է փակագիր արձանագրութիւն «Ամիր Հասան» Այս արձանի բարձրութիւնը $1\frac{5}{8}$ արշին է լայնութիւնը $\frac{5}{4}$ արշին: Միւս քարի վերայ, իբրև առաջինի շարունակութիւն, ներկայացրած է նետը պարանոցում ցցուած եղնիկ, որ յետ նայելով դէպի հեծեալը, սրընթաց փախչումէ յառաջ, ձիաւորին հակուակ կողմի վերայ:

Արքեպիսկոպոս Ջալալեանի գիրքը կազմելու ժամանակ՝ 1857 թուականին, ինչպէս երևումէ նորա նկարագրութիւնից, այդ

արձաններն եղել են հիւսիսային պատի ճակատում, որտեղից նոքա ընկել են, կամ որ աւելի հաւանական է, այլոց ձեռքով պոկուել են և բերուել այս կողմը: Ինչև ինչ, այս երկու պատուական արձանները բացօդեայ և անխնամք մնալով, կարող էին ենթարկուել մտշուղ և աւերող ազդեցութեանց, ուստի իմ կարգադրութեամբ և օգնութեամբ ուղեկիցներս տարան նորանց եկեղեցու ներսը և բնական գիրքով բազմեցրին սեղանի վերայ:

Այժմ մտնենք ներս: Գաւիթն ունի հարաւային և արեւմտեան դուռն: առաջինը փոքր է, լցուած է կոյտերով և կարելի է անցնել միայն կուզէ կուզ: Երկրորդը մեծ է: Նախքան սորանով մտնելը, տեսէք ձեր աջ կողմում վերը՝ մի փոքրիկ զանգակատուն երկյարկանի կամարով: Ստորին յարկում մի արձանաքար ունի արձանագրութիւն խանգարուած, եղծուած, սակայն որոշելի է հետեւեալը. «ԹՎ. 22 Թ. (779) կամաւն բարերարին Աստուծոյ ես Յովհաննէս և կենակից իմ Քաճնայ շինեցաք զանկակի զտունս Աստուծոյ, տուաք » վերին յարկն աղեղնաձև է, երկու կողմից բաց և փոքրիկ գմբեթը սև սալերով ծածկուած, իսկ գլխումն երկու գնդաձև քար միմեանց վերայ դրած: Գաւիթը սրբաառաջ է, 7 քայլ երկայնութեամբ և 9 քայլ լայնութեամբ: Նորա արեւելեան պատն է նոյն իսկ եկեղեցու արեւմտեան պատը: Նա ունեցել է կամարակապ առաստաղ, այժմ բոլորովին խոնարհուած:

Գաւթի ներսն, արեւմտեան պատի վերայ եղած մի արձանագրութիւն արդէն եղծուած է և անորոշելի, իսկ արեւելեան պատի վերայ, որ նոյն եկեղեցու արեւմտեան պատն է, դռնից դէպի հարաւ մինը միւսի տակ հետեւեալ արձանագրութիւններն են: « զՊարոն Խոնթքարն յիշեցէք ի Քրիստոս՝ ԹՎ. ՊԶԲ (882), Սորա տակը « կամաւն Աստուծոյ ես Պարսամ արեղայ միաբանեցայ փոխան այգի սնկեցի յանդն սուրբ Աստուածածնիս « և տուի արձանագրով յիշատակ հոգւոյ իմոյ, միաբանք սահմանեցին Բ. պատարագ: Հակառակողն զՅուդային և զԿայենին առցէ. ԹՎ. 22. (780) », սորա տակը մի այլ արձանագրութիւն. « Ես Մկրտիչս զիմ հոգոյ բաժինն տւի սուրբ Աստուածածնիս,

միաբանք ի պատարագն յիշեն թի. 29, 6 (795)։ Հարաւային պատի մի քարի վերայ գրած է լսկ թուականը «288 (951)»։

Եկեղեցին ներս մտնելուց առաջ նայեցէք դրան քարաշէն շրջանակը, որքան գեղեցիկ քանդակած և միմեանց կցած են քարերը։ Դրան վերի կիսաքօլոր քարը իւր վերայ պատկերացրել է կանգուն գրութեամբ Տիրամօրը, գրկումը բռնած մանուկ Յիսուսին։ Այդ միակ դռնից մտնելով դուր կտեսնէք որ եկեղեցու ներսը, ի բաց առած սեղանը, հաւասար լայնութեամբ և երկարութեամբ, է հինգ հինգ քայլ, չորս սրմնափակ սիւներով։ Յատակը մաքուր սալած է։ Չունի և ոչ մի խորան, բայց հիւսիսային պատում ունի աւազան մկրտութեան շքեղ, ծաղկահիւս շրջանակով։ Հարաւային պատի մէջ շինած են երկու փակ պատուհան։

Գմբեթի կամարի տակ երևում են չորս ձեւակերպեալ աւետարանչաց քանդակապատկերը. իսկ սեղանի կամարի տակ պատկերացած Յիսուսը ձախ ձեռում բռնկելով Աւետարանը, աջ ձեռի ցուցամատը պարզել է գէպի երկինքը։ Փայք վէմ քարը ունի իւր վերայ հօգեւորական անձի մի կերպարանք, ձեռները գէպի երկինք յօարածած։ Երևում է որ սա վէմ քար չէ եղած առաջ։ Սեղանի վերայ կան մի քանի կաւէ ճրագներ։ Մերձակայ գիւղորդից հայ կանայք, Սգոստոս ամսում, սուրբ Աստուածածնի տօնին գալիս են ուխտ։

Այժմ գիմնը արձանագրութեանց, Եկեղեցու հարաւային պատի վերայ գրած է «Կամաւն Աստուծոյ ես Սմբատ», որպի Նիւպարիտի, միաբանեցայ աւագ անապատի սուրբ Կարապետիս «և Սպիտակաւոր Աստուածածնիս և տուի զՎահրամանկենց այգին իւր ամէն հատով զճառ և տունի, որ հանապազ զմեզ ի պատարագն յիշեն, հակառակն և խափանողն դատին Աստուծոյ «և նա է . . . բառցէ յամէն խորճէ ազատ. թի. 228 (788)»։

Հիւսիսային պատի վերայ կան հետեւեալ արձանագրութիւնները։ Բոլորովին վերը «Յուսովն որ առ Աստուած՝ ես Ամիր Հասան որդի Էաչո ես Բուբաք Տէր Զաքար ենցս ի «Խատորալէզ զՆախասպար Շահինենց այգին, զԳլխենց այգին այտե՛լինկին սոււաք սուրբ և Գրիգորին գերեզ-

«ման ի ձեռն սուրբ . . . մեծ յուսով յիշատակ մեզ և . . .
 «եցն մերոց սուրբ հարանց սուրբ . . . կարգեցին տարին Կ.
 «(4) աւր պատարագ աւագ հինգշաբթի . . . »:

Նոյն պատի վերայ, առաջինից ստոր, երկրորդ արձանագրու-
 թիւնից, մասամբ եղծուած, մասամբ փակագիր լինելուն պատ-
 ճառով շատ դժուարութեամբ կարելի է կարդալ հետեւեալը.
 «Յուսովն որ առ Աստուած ես Բուս . . . էս զԱւաւեականց
 «այգին որ ի հալալ գնուած . . . տի յանապատն Սպիտակա-
 «ւոր Աստուածածնիս ի հոգոյ բաժին ի ձեռն սուրբ հայր Մկր-
 «տչին և սուրբ հայրն և միաբանքն գրեցին փոխարէն Աստուա-
 «ծածնի Բ. պատարագ ի թվ. 22Թ. (789—1340) յամէն խարձէ
 «ազատ, հակառակողն դատի յԱստուծոյ»: Սորա տակի երրորդ
 արձանագրութիւնը մէկ և կէս շարքից կազմած է և անմիտ բու-
 վանդակութեամբ: Սորանից ստոր վերջին չորրորդ արձանագրու-
 թիւնը խիստ փակագիր լինելով դիւրամատչելի չէր, ուստի
 կարելի էր որոշել միայն հետեւեալ թուականը թվ. 22Ա (771):

Հարաւային պատի վերայ՝ պատուհանից վեր գրած է հետե-
 ւեալը «Կամաւն Աստուծոյ ես Ամիր Հասան որդի Պրէտշո տուի
 «դիմ հոգոյ բաժին ի Սխտորալէզն Ի. ազատ եղբրեղին Արահո-
 «գենց Քէյի գետառէն ի գեղէն վեր բուռն . . . ընծայեցի
 «Սպիտակաւոր սուրբ Աստուածածնի բարեխօս առ Քրիստոս,
 «սուրբ Վարդանէն և այլ միաբանք և սուրբ հարք սահմանեցին
 «Խ. (40) աւր . . . հակառակողն ոմա զՅուդայի առցէ զվճիռ
 «. . . կատարողքն աւրհնին»: Արեւմտեան պատի վերայ գրած
 է «Կամաւն Աստուծոյ ես Մարգարէ վարդապետս և . . .
 «Գրիգորս և եկին սուրբ շնորհաւոր տուաք ընծայ Աստուա-
 «ծածնին զԹաճէք հողն . . . (անթուական):

Սորանով վերջանում են այս եկեղեցու բոլոր արձանագրու-
 թիւնները, որոնք համարեա ոչինչ տեղեկութիւն չեն հաղոր-
 դում եկեղեցու պատմութեան համար: Ո՞վ է շինել, ե՞րբ է
 շինել, ո՞ք են վանահայրերը, քանի՞ են միաբանները, ե՞րբ են
 շինուել շրջապատած խցերը, հիւսիսային պարիսպը և աղբիւրը,
 մինչև ե՞րբ է շարունակուել կենդանութիւնը վանքի մէջ և
 այն, այդպիսի և գորանց պիսի հարցերի համար մենք արձա-

Նագրութիւններէց կամ այլ աղբիւրներէց, տարաբաղդաբար տեղեկութիւն չենք ստանում: Արդարև խոստովանում եմ, արձանագրութիւնները լիովին չեն կարգացուած իմ կողմից, ինչպէս յիշեցի վերը, ըստ որում, հակառակ իմ սովորութեան և ցանկութեան, այդ վանքին այցելած եմ ընդամենը մի անգամ որ շատ քիչ է՝ այլքի առաջ ունենալով արձանագրութեանց եղծուիլը և փակագրութիւնը: Սակայն այդ ամենը ուղղելի հանգամանքներ էին՝ եթէ այցելութիւնս առաջին և վերջին անգամը լինէր: Բայց և այնպէս փոքր վստահութեամբ կարելի է ասել որ բոլոր արձանագրութիւնները եթէ ամբողջովին լուսաբանուէին անգամ՝ եկեղեցու պատմութեանը էլի ոչինչ աւելանալ կարող չէր: Երևի փակագրութեանց դժուարութիւնից է եղել որ Ջալալեանի գիրքը չէ բովանդակում իւր մէջ յիշեալ արձանագրութիւններէց և ոչ մի հատն անգամ:

Ինչև իցէ, յիշեալ արձանագրական շրջանը եկեղեցու կենդանութեան վերաբերութեամբ կազմում է 1322 մինչև 1502 թուականը, կամ 180 տարի ժամանակամիջոց: Իմացանք որ այդ շրջանում եկեղեցին ստացել է նուէր մի քանի այգիներ և 1330 թուականին շինուել է զանգակատունը ոմն Յովհաննիսի և իւր Թաճնայ կողակցի շնորհիւ:

Թէպէտ ոչ շատ հեռու վանքից գտնուում են մի երկու թուրք գիւղեր, սակայն Սպիտակաւոր սուրբ Աստուածածնի եկեղեցին անասնոց արտահոսութիւնից ազատ է մնացել: Սորա պատճառը այն է, որ վանքը կանգնած է Բաշքեանդցոց հողաբաժնի մէջ, ուր թուրքերը մուտք ունենալ կարող չեն: Այս վանքից ճանապարհը տանում է դէպի հիւսիս մօտակայ Շատինու վանքը (գլ. 1. Դ.) մերթ ծաղկազարդ, մերթ անտառապատ լեռների լանջերով, որտեղից սքանչելի տեսարան է բացւում դէպի արևմուտ: Բիւլբիւլ օլան գիւղի վրայից դէպի Ալագեազ գետի ձորը և նորանից վեր Աբանայի բարձրութիւնները: Բայց մենք կերթանք արևելք, Բաշքեանդի բերդը տեսնելու:

(Շարունակելի)

ԲԱԶԵԲԻՐՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

Երբ կոմս Մ. Դ. Լորիս—Մելիքեանի մահուան բոլոր հասարակութեան, Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐ հեռուեալ մխիթարական հեռագիրն ուղղեց նորա վըշտացած ամուսնուհի Ի Նիցցա: